ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«03» դեկտեմբերի 2014

№ 1066-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 113-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 113-Ն հրամանի հավելվածը լրացնել նոր՝ 11.1-րդ կետով. «11.1 Հաստատության խորհրդի կազմում չի կարող առաջադրվել այն ծնողը, ով միաժամանակ հանդիսանում է տվյալ հաստատության մանկավարժ»:
2. Հայաստանի Հանարապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության /պետ՝ Ն.Հովհաննիսյան/ և իրավաբանական /պետ՝ Վ.Բավեյան/ վարչություններին՝ հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

_____ . .. _____ _____2014թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 15-ի N 656–Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության Հավելված 1-ի 14-րդ կետի <<դ>> ենթակետի պահանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.<<Բաց կառավարման գործընկերություն>> նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության՝ երկրորդ գործողությունների ծրագրի հավելվածի 9-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Սյուզաննա Մակյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի պետ (ղեկավար)
Լուսինե Գրիգորյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ
Լիլիթ Հլղաթյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վերլուծության բաժնի պետ

Մարինե Աղաջանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ
Գրիգորի Գրիգորյանց	<<Վորլդ Վիժն Հայաստան>> ազգային գրասենյակի երեխայի պաշտպանության և կրթության ոլորտի քաղաքականության մշակման և որակի վերահսկման փորձագետ (համաձայնությամբ)
Վարազդատ Սարգսյան	<<Վորլդ Վիժն Հայաստան>> ազգային գրասենյակի ծրագրերի փորձագետ (համաձայնությամբ)
Արտաշես Տոռոզյան	<<Գորիսի ուսուցիչների միություն>> ՀԿ նախագահ (համաձայնությամբ)

2. Աշխատանքները կազմակերպել ծրագրի ժամանակացույցին համապատասխան:

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ մշակված իրավական ակտը ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարին՝ հաստատման:

/ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No_____ «_____» _____2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 113-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 113-Ն հրամանի հավելվածում՝

1) 4-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) ծնողական խորհուրդը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին կից հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների:»,

2) 11-րդ կետում «անդամ» բառից հետո լրացնել՝ «,իսկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին կից հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների

խորհրդի կազմում մեկական ներկայացուցիչ են առաջադրում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարները» բառերը,

3) 11.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«11.1 Հաստատության խորհրդի կազմում ՀՀ կրթության և գիտության նախարարության, լիազորված մարմնի և ծնողական խորհրդի կողմից չի կարող առաջադրվել տվյալ ուսումնական հաստատությունում սովորողի այն ծնողը, ով միաժամանակ հանդիսանում է տվյալ հաստատության մանկավարժ :»:

2. Հայաստանի Հանարապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Ն.Հովհաննիսյանին և իրավաբանական վարչության պետ Վ.Բավեյանին՝ հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ